ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

<<ԱՇՏԱՐԱԿԻ Ն.ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏԱԴԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ- ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ- ՎԵՆԵՐԱ ԳՈՒԼԱԿՅԱՆ, Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՂԵԿԱՎԱՐ- ԿԱՐԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Գլուխ I ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ----------5

Գլուխ II ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳԱՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ----------18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարի կրթական համակարգում շարունակական կերպով տեղի են ունենում արդիականացման գործընթացներ, որոնց հիմնական նպատակն է համակարգել հնարավոր բոլոր ռեսուրսները՝ տեխնոլոգիական, մարդկային՝դրանք ծառայեցնելով կրթական նոր ու արդիական որակների ապահովմանը: Ակնհայտ է, որ վերջին տասնամյակում կրթական բարեփոխումների առանցքում սովորողների գործառույթների ու պարտականությունների վերարժևորումն է՝ հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները:

ՈՒսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև՝ ըստ դիրքորոշումների ու արժեքների ձևավորման[1]:Գնահատումը միտված է սովորողի ուսումնական գործունեության խթանմանը,ակտիվացմանը,շարունակաբար զարգացմանը և կրթությանորակի վերահսկմանը: Գնահատման հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, հիմնավորվածության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Գնահատման եղանակները-Ընթացիկ գնահատումն իրականացվում է ոչ միավորային(բնութագրող), ձևավորող(ուսուցանող) և քանակական(միավորային) ձևերով: Ձևավորող գնահատման մեթոդները,տեսակները և գործիքները ընտրում են ուսուցիչները, հաստատում է մանկավարժական խորհուրդը:

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ գնահատման համակարգի ձևերից մեկը՝ ձևավորող գնահատումը և կիրառել այն պատմության դասավանդման գործընթացում: ՈՒսումնասիրել և վերլուծել ձևավորող

[1] ՀՊՉ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

գնահատման միջոցներն ու հնարները, մեթոդների առանձնահատկությունները և բացահայտել դրանց կիրառման արդյունավետությունը ՝ ուսուցման նյութի յուրացման արդյունավետության համար :

.Արժևորել ձևավորող գնահատման դաստիարակչական ներգործությունը աշակերտների վրա

. Առանձնահատուկ կարևորել ժամանակակից կրթության ոլորտում աշակերտների կարողունակությունների՝գիտելիքների, կարողությունների, հմտությունների ,դիրքորոշման, արժեքային համակարգի գնահատումն ու արժևորման ձևերը, ստուգման տեսակներն ու միջոցները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտությունը շարադրելիս կիրառվել են զրույցի, դիտման, դիտարկման և ձևավորող գնահատման մեթոդները:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը: Հետազոտությունը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկի

ԳԼՈՒԽ I ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատման տեսակները

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ, որոնք հաջորդում եմ մեկը մյուսին և կարող են պարբերաբար կրկնվել նշված հաջորդականությամբ.

1) հայտորոշիչ (դիագնոստիկ) գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում:

Այս հայտորոշիչ-ձևավորող-ամփոփիչ շղթան կարելի է անգամ մեկ դասի ընթացքում անել՝ փոքրիկ փուլի մեջ և այդ փուլերը կարող են կարճատև և երկարարտև լինել՝ դասից մինչև ենթաթեմա, թեմա, կիսամյակ կամ տարի (կետ 39): Գնահատման տարբեր տեսակների ժամանակ կիրառվում են բազմազան գործիքներ, ընդ որում՝ միևնույն գործիքը կարող է կիրառվել գնահատման բոլոր տեսակների դեպքում: Կարևոր է, թե ինչ նպատակով է կիրառվում այդ գործիքը և թե ինչպես են օգտագործվելու տվյալ գնահատման արդյունքները:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի կողմից՝ ինքնագնահատման, փոխադարձ գնահատման միջոցով:

Ուսուցչի և սովորողների կողմից գործածվող գնահատման ձևերը կարող են նույնը լինել, օրինակ՝ թեստ, քննարկում, նախագիծ և այլն:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ)

2) բանավոր հարցում

3) գրավոր աշխատանք (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, արտագրություն և այլն)

4) գործնական աշխատանքներ

5) տնային աշխատանք

6) թղթապանակ

6) նախագծային աշխատանք

Ձևավորող գնահատման ձևերից յուրաքանչյուրի համար սահմանվում են չափանիշներ: Չափանիշները պետք է լինեն հստակ և ճշգրիտ, որպեսզի գնահատումը լինի օբյեկտիվ:

Չափանիշների հիման վրա ապահովվում է ուսուցչի և սովորողի միջև հետադարձ կապը, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողը ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ որոնք ուղղված են սովորողի ուսումնառության արդյունքները բարելավելուն:

Ձևավորող գնահատում իրականացնելիս օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի տրվում:

Ձևավորող գնահատում անընդհատ գործընթաց է, որը պետք է իրականացնել յուրաքանչյուր դասին: Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Ձևավորող գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է, ոչ թե սովորողը և ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի և տեսակների ընտրության հիմքը ուսուցման նպատակի հստակ ձևակերպումն է:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչը պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գիտենք, որ չափազանց կարևոր է սովորողների ակտիվ մասնակցությունը իրենց ուսումնական գործընթացին և ձևավորող գնահատման ճիշտ և պարբերական կիրառումը կապահովի ցանկալի ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու վերջնարդյունքները կարելի է ներկայացնել, որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է,որը պարբերաբար իրականացվում է ուսուցչի կողմից ուսումնական գործընթացի ամբողջ ընթացքում և ուղղված է սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակի,առկա դժվարությունների բացահայտմանը և որի ընթացխում արձանագրված տեղեկությունները օգտագործվում են ուսուցիչների և սովորողների կողմից ուսուցման և ուսումնառության գործընթացը բարելավելու համար:Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Ձևավորող գնահատման խնդիրներն են.

.ուսուցման նպատակների և գնահատման չափանիշների սահմանումը և ներկայացումը սովորողներին

.արդյունավետ համագործակցային ուսուցման համար միջավայրի ստեղծումը

.սովորողների զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապի ապահովումը

.սովորողների կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության որակների ձեռքբերումը:

Ձևավորող գնահատման մեթոդներն ու ձևաչափը ընտրվում են ուսուցման նպատակի և առարկայի ծրագրի յուրաքանչյուր բաժնի կամ թեմայի համար ակնկալվող արդյունքներին համեմատ:Ձևավորող գնահատման գործընթացում ներառվում են առարկայի ծրագրի բոլոր վերջնարդյունքները:

Ձևավորող գնահատման համար ուսուցիչը իրականացնում է՝

.ձևավորող գնահատման պլանավորում

.ձևավորող գնահատման մեթոդի ընտրություն

.ձևավորող գնահատման կազմակերպում և իրականացում

. ձևավորող գնահատման արդյունքների վերլուծություն

.հետադարձ կապի ապահովում

Ձևավորող գնահատման պլանավորման և կազմակերպման համար ուսուցիչը կազմում է ձևավորող գնահատման գործընթացը արտացոլող դասի ծրագիրը,բարելավի կիրառվող

մեթոդների որակը,օգտագործի հետադարձ կապի տրամադրման արդյունավետ

ձևեր,իրականացնի դասերի վերլուծություն(սովորողների աշխատանքի որակ,գնահատման գործիքների որակ, գործընկերների հետ հետադարձ կապ,զրույցներ ծնողների

հետ,այլ.),ինքնավերլուծության և մանկավարժական գործունեության կատարելագործման համար:

Ձևավորող գործընթացը կազմված է գնահատման գործընթացի երեք

բաղադրիչներից՝գնահատում ուսուցչի կողմից,ինքնագնահատում և սովորողների փոխադարձ գնահատում:Սովորողների ինքնագնահատման ընթացքում խրախուսվում են սովորողների ինքնակարգավորման, ինքնուրույն ուսուցման

կարողությունները՝օբեկտիվության հիմքի վրա:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել թեստեր,բանավոր հարցումներ,գործնական աշխատանքներ,տնային աշխատանքներ,

քննարկումներ,փոխադարձ գնահատումներ,ինքնագնահատումներ…

Ձևավորող գնահատման մեթոդները կարող են օգտագործվել անհատական,զույգերով և խմբային աշխատանքների կազմակերպման ընթացքում:

Ձևավորող գնահատման ժամանակ օգտագործվում են սովորողի առաջընթացը նկարագրող բնութագրեր,վերլուծություններ և մեկնաբանություններ: Ձևավորող գնահատման

արդյունքում միավոր չի դրվում:

Ձևավորող գնահատման արդյունքում ապահովվում է սովորողների հետ հետադարձ կապը,որն օգտագործվում է ուսումնական գործընթացի տարբեր թուլերում և ուսուցչին
հնարավորություն է ընձեռում ապահովել անդադար փոխազդեցություն սովորողի հետ,ինչի արդյունքում իրականացվում է ուսուցման գործընթացի ճշգրտում և հետագա
պլանավորում:
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի գիտելիքների ձևավորող գնահատումն իրականացվում է անհատական ուսուցման պլանին համապատասխան: Ձևավորող գնահատման մեթոդները- <<Մուտքի
քարտեր>>, <<Ջերմաչափում>>, <<Հարցադարան>>, <<Գիտելիքների
բուրգ>>,<<Ադամանդների հիերարխիա>>,<<Խմբագրական խորհուրդ>>,<<Արտաքին և ներքին շրջանակներ>>, <<Չորս անկյուններ>>,<<Երեքրոպեանոց դադար>>,<<Ելքի քարտեր>>,<<Մեդալ>> և այլն...
Ձևավորող գնահատման իրականացման նպատակով կարելի է օգտագործել աշխատանքների հետևյալ ձևերը..
.կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանքներ
.բանավոր հարցում
. տնային առաջադրանք
.խմբային աշխատանք,համագուծակցություն,նախագիծ
.ինքնուրույն կատարման ուսումնական առաջադրանք
. բաց հարցերով քննարկումներ
.ինքնագնահատում
.փոխադարձ գնահատում
.գործնական աշխատանք,կիրառություններ
.ռեֆերատ
Արդյունավետ ուսուցումը կարելի է իրագործել միայն այն դեպքում,երբ սովորողին պարզ լինի, թե ինքն ինչ գիտի ,հասկանա,թե ուսումնական տվյալ փուլի վերջում ինչ պետք է

իմանա և սկզբում կարողանա անել այդ աշխատանքի մի մասը,հասկանա առաջադրանքի բուն իմաստը և ուսումնական նյութի ավարտին ի վիճակի լինի կատարելու ամբողջ աշխատանքը:

Արդյունավետ ուսուցման համար խիստ կարևոր է սովորողներին քաջատեղյակ դարձնել

ուսուցման նպատակներին,հստակ ներկայացնել դրանց հասնելու քայլերը և գնահատման չափանիշները:Եթե աշակերտը թեմայի շրջանակում առաջարկում է նպատակին միտված ինչ-որ հարցի մեկնաբանում,ապա ուսուցիչը պետք է խրախուսի նման նախաձեռնությունը և այն քննարկի:Փորձառու ուսուցիչը ոգևորում և աշակերտի մեջ առաջադրանքը

կատարելու ցանկություն է առաջացնում:Պատասխանատու աշակերտի ճիգերը կհամարվեն հաջողված, եթե նրա մոտ առաջանան հետևյալ հարցերը՝

.որը է իմ ուսումնական մոտակա նպատակը

.այդ նպատակին հասնելու համար ինչ ձեռքբերումներ ունեմ

.այդ նպատակին հասնելու համար ինչ պետք է անեմ

ՈՒսուցչին նույնպես պետք է մշտապես հուզեն այդ հարցերը, բայց այլ տեսանկյունից: Նա պետք է տեսնի, թե ինչպիսին է աշակերտի վիճակը ՝այդ հարցադրումների իմաստով,որից հետո որոշի հետագա քայլերը:ՈՒսուցիչը պետք է հստակ պատկերացնի և հասկանա

ուսումնական գործընթացը երկուստեք՝ իր և աշակերտի դիրքերից:

Ձևավորող գնահատման բաղադրիչների շրջափուլում կարևոր է հատկապես հետադարձ կապի տրամադրումը: Ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու իրենց ձեռքբերումները, աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները և բարելավելու իրենց բացթողումները:

Հետադարձ կապն ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի գործողությունների վերաբերյալ փոխադարձ համարժեք արձագանքն է: Այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի

գործողություններին սովորողների կողմից, սովորողների կողմից ուսուցչի գործողություններին տրվող անդրադարձի: Հետադարձ կապ ապահովելիս ուսուցիչը պետք է սովորողին ուղղի քաջալերող խոսք, հուշումներ, ստուգող բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ կողմերը, բացահայտել բացթողումները և ուսումնառության արդյունքը բարելավելու ուղիներ գտնել: :

Այսպիսով՝ հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակն ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

Ընդհանրացնելով կարող ենք ավելացնել, որ հետադարձ կապը ուսուցման և ուսումնառության անբաժանելի մասն է: Որքան այն արդյունավետ է, որքան շեշտադրվում են սովորողների ձեռքբերումները և իրականացվում է աշխատանքի պատշաճ վերլուծություն, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ սովորողները շարունակաբար կբարելավեն իրենց առաջադիմությունը:

Շատ կարևոր է, որ ուսումնառության ողջ ընթացքում սովորողն իրեն հարգված և կարևորված զգա, հասկանա, որ իր կրթության հանդեպ առկա է պատասխանատու և հետևողական վերաբերմունք:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի կողմից՝ ինքնագնահատման, փոխադարձ գնահատման միջոցով:

Ուսուցչի և սովորողների կողմից գործածվող գնահատման ձևերը կարող են նույնը լինել, օրինակ՝ թեստ, քննարկում, նախագիծ և այլն:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ)

2) բանավոր հարցում

3) գրավոր աշխատանք (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, արտագրություն և այլն)

4) գործնական աշխատանքներ

5) տնային աշխատանք

6) թղթապանակ

6) նախագծային աշխատանք

Ձևավորող գնահատման ձևերից յուրաքանչյուրի համար սահմանվում են չափանիշներ: Չափանիշները պետք է լինեն հստակ և ճշգրիտ, որպեսզի գնահատումը լինի օբյեկտիվ:

Չափանիշների հիման վրա ապահովվում է ուսուցչի և սովորողի միջև հետադարձ կապը, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողը ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ որոնք ուղղված են սովորողի ուսումնառության արդյունքները բարելավելուն:

Ձևավորող գնահատում իրականացնելիս օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի տրվում:

Ձևավորող գնահատում անընդհատ գործընթաց է, որը պետք է իրականացնել յուրաքանչյուր դասին: Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Ձևավորող գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է, ոչ թե սովորողը և ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի և տեսակների ընտրության հիմքը ուսուցման նպատակի հստակ ձևակերպումն է:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչը պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գիտենք, որ չափազանց կարևոր է սովորողների ակտիվ մասնակցությունը իրենց ուսումնական գործընթացին և ձևավորող գնահատման ճիշտ և պարբերական կիրառումը կապահովի ցանկալի ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու վերջնարդյունքները կարելի է ներկայացնել, որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Գլուխ II ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳԱՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ձևավորող գնահատման ձևերը և գործիքակազմը կիրառել եմ իմ դասավանդած դասարաններում:

Ձևավորող գնահատման հնարներ.

Ձևավորող գնահատումն օգնում է ուսուցչին ընթացիկ արդյունքների

հիման վրա

նախանշել իր և սովորողների քայլերը: Ուսուցչի քայլերի ճշգրտումը և զարգացնող

առաջադրանքների կիրառումը օգնում են բարելավել սովորողների ձեռքբերումները:

Ձևավորող գնահատման մեթոդները- <<Մուտքի

քարտեր>>,<<Ջերմաչափում>>,<<Հարցադարան>>, <<Գիտելիքների

բուրգ>>,<<Ադամանդների հիերարխիա>>, <<Խմբագրական

խորհուրդ>>,<<Արտաքին և ներքին շրջանակներ>>, <<Չորս

անկյուններ>>,<<Երեքրոպեանոց դադար>>,<<Ելքի քարտեր>>,<<Մեդալ>> և այլն...

Ձևավորող գնահատման իրականացման նպատակով կարելի է օգտագործել աշխատանքների հետևյալ ձևերը..

.կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանքներ[2]

.բանավոր հարցում

. տնային առաջադրանք

.խմբային աշխատանք,համագործակցություն,նախագիծ

.ինքնուրույն կատարման ուսումնական առաջադրանք

. բաց հարցերով քննարկումներ

.ինքնագնահատում

.փոխադարձ գնահատում

.գործնական աշխատանք,կիրառություններ

.ռեֆերատ

Արդյունավետ ուսուցումը կարելի է իրագործել միայն այն դեպքում,երբ սովորողին պարզ լինի, թե ինքն ինչ գիտի ,հասկանա,թե ուսումնական տվյալ փուլի վերջում ինչ պետք է իմանա և սկզբում կարողանա անել այդ աշխատանքի

[2] Սարուխանյան Ս. և ուրիշներ, ՈՒսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ,վարժություններ, Վանաձոր.2008

մի մասը,հասկանա առաջադրանքի բուն իմաստը և ուսումնական նյութի ավարտին ի վիճակի լինի կատարելու ամբողջ աշխատանքը:

Արդյունավետ ուսուցման համար խիստ կարևոր է սովորողներին քաջատեղյակ դարձնել ուսուցման նպատակներին,հստակ ներկայացնել դրանց հասնելու քայլերը և գնահատման չափանիշները:Եթե աշակերտը թեմայի շրջանակում առաջարկում է նպատակին միտված ինչ-որ հարցի մեկնաբանում,ապա ուսուցիչը պետք է խրախուսի նման նախաձեռնությունը և այն քննարկի[3]:Փորձառու ուսուցիչը ոգևորում և աշակերտի մեջ առաջադրանքը

կատարելու ցանկություն է առաջացնում:Պատասխանատու աշակերտի ճիգերը կհամարվեն հաջողված, եթե նրա մոտ առաջանան հետևյալ հարցերը՝

1.որոնք են իմ ուսումնական մոտակա նպատակները.

2. Ինչպես պետք է հասնեմ այդ նպատակների իրագործմանը:

Իմ դասավանդման ընթացքում ես նպատակադրվեցի յուրաքանչյուր դասին հանգամանալից նախապատրաստվել, կիրառել ձևավորող գնահատման գործիքներ և պլանավորել դասերը հետևյալ քայլաշարով. Նպատակադրվեցի յուրաքանչյուր դասին հանգամանալից նախապատրաստվել և պլանավորել հետևյալ քայլաշարով.

1. Ներածություն / կազմակերպչական հարցեր/
2. Դասի նպատակի և վերջնարդյունքի ծանոթացում
3. Նոր նյութի ներկայացում, ուսուցման գործընթացի մոդելավորում,
4. Ընկալման մակարդակի ստուգում,
5. Սովորողների վերահսկվող գործողությունների կազմակերպում
6. Ինքնուրույն աշխատանք
7. Գնահատում և անդրադարձ

[3] Ն.Տողանյան,Թ.Թովմասյան, Լ.Գրիգորյան,Մեթոդական ձեռնարկ միջին դպրոցի ուսուցիչների համար, Երևան, 2012:

Թեման՝ Սյունիքի հայկական իշխանությունը, դասարան 8-րդ

Նպատակը՝ Ուսուցանել 17-րդ դարավերջին և 18-րդ դարում հայ ժողովրդի ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալների և ընթացքի մասին գիտելիքների ձեռքբերմանը, ազատագրական պայքարի կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:

Ակնկալվող վերջնարդյունքը՝Կարողանա

- բացատրել ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալները XVII դարավերջին, պայքարի հիմնական արդյունքները:
- բացատրել Հայաստանի ազատագրության խնդրում եվրոպական պետությունների հետ կապված հույսերի ձախողման պատճառները
- վերլուծել Արցախի և Սյունիքի զիվախ պայքարի արդյունքները /XVIII դ. 20-ական թթ..
- վերլուծել և արժևորել դարաշրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագները և գործիչների գործունեությունը:

Դիդակտիկ պարագաներ՝պլակատ, նկար,քարտեզ,Դավիթ Բեկի արձանի դիտարկում /ՏՀՏ-ի օգտագործում/

Խաչվող հասկացություններ՝ ազատագրում,ապստամբություն,ազգային ինքնագիտակցություն,պայքար

Դասի ընթացքը՝

1.Զրույց տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների վերաբերյալ, թե ինչ դեպքեր են տեղի ունեցել , ինչ են հասկանում <<Ազատագրական պայքար >> ասելով,կապել ներկա իրավիճակի հետ, գտնեն նմանություններն ու տարբերությունները:

2.Դասասենյակի կահավորում,ՏՀՏ-ի առկայություն՝<<Դավիթ Բեկ >> ֆիլմի հատվածների դիտում:Զրույց տեսանյութի վերաբերյալ,ֆիլմի և դասագրքում եղած նյութի համընկնումներն ու տարբերությունները:

3. Ներկայացնել աշակերտից պահանջվող առաջադրանքի և ակնկալվող վերջնարդյունքի մասին։

4. Ստուգել աշակերտների գիտելիքները Սյունիքի ազատագրական պայքարի վերաբերյալ։

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Սովորող1	Սովորող2	Սովորող3	Սովորող4	Սովորող5
Կարողանում է կարդալ և պատմել	. . .	. .	. .	. . .	. .
Գրավոր խոսքի զարգացում	. . .	.	. .	. .	. . .
Տնային հանձ. կատարում	. . .	. .	. .	. . .	.
Բնութագրում է պատմական անհատներին	. . . . .	. . .	. . .	. . .	. .
Վերլուծում է դեպքերի պատճառահետևանքային կապերը	. . .	.	.	. .	. . .
Համագործակցություն	. . .	.	. .	. . .	. .
Կազմի հարցեր դասի վերաբ	. .	. .	. .	. . .	. .
Արտահայտի դիրքորոշում	. . .	. . .	.	. .	. .

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով կատարելով հետազոտական աշխատանք ձևավորող գնահատում թեմայի վերաբերյալ, հանգեցի հետևյալ եզրակացություններին.

- Կրթակարգում<< Ձևավորող գնահատման >> մասին ներկայացված

գաղափարները իրատեսական են, ողջունելի

- Նոր մեթոդների կիրառմամբ հնարավոր է վերացնել խոչընդոտները՝ ի նպաստ կրթության որակի բարձրացման
- Ձևավորող գնահատման միջոցներն ու հնարները, մեթոդները ունեն հետաքրքին առանձնահատկությունները և դրանց կիրառումը արդյունավետ է ուսուցման նյութի ընկալման համար :
- Ձևավորող գնահատումը դաստիարակչական ներգործությունը ունի բոլոր աշակերտների վրա
- Առանձնահատուկ կարևոր են ժամանակակից կրթության ոլորտում աշակերտների կարողունակությունների՝գիտելիքների, կարողությունների, հմտությունների ,դիրքորոշման, արժեքային համակարգի գնահատումն ու արժևորման ձևերը, ստուգման տեսակներն ու միջոցները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Օ.Միքայելյան, Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Երևան 2010:

2. Ն.Տողանյան,Թ.Թովմասյան, Ն. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ միջին դպրոցի ուսուցիչների համար, Երևան, 2012:

3. Ս.Սարուխանյան, ՈՒսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ,վարժություններ, Վանաձոր, 2008:

4. Ս. Խաչատրյան, ՈՒսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:

5. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն.Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:

6. ՀՊՉ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788